

կարմրադեղով՝ ստուգեալ հաւատարմութեամբ դաւանեաց զկատարումն մարտիրոսութեանն, որ դիպելոց է սրբոցն:

63 «Եւ որ երեւեցաւ քեզ բազմութիւնք<sup>1</sup> տղայոց շուրջ կալով ի վերայ արծաթի սկտեղն<sup>2</sup>, զուարթացի՛ր ցնծալից<sup>3</sup> ուրախութեամբ. զի ահա յարգանդէ զաւակիդ, որ տուաւ քեզ յկրարչէն, ելցեն բազում շառաւիղք<sup>4</sup>, արք ընտիրք զաւրութեամբ. ընդ որս<sup>5</sup> միաբանեալ<sup>6</sup> եւ այլ բազմութիւնք լաւ արանց<sup>7</sup>, յազգէ նախարարացդ Յայոց. որք զաւրացեալք սուրբ բանին Աստուծոյ եւ գյարուցմունս<sup>8</sup> թագաւորաց եւ զսպառնալիս իշխանաց առ ոչինչ համարեալ<sup>9</sup>՝ միացուցանեն<sup>10</sup> զանձինս ընդ յոյսն բաղձալի երկնաւոր կոչմանն, չհայելով ի մեծութիւնս սնտոխս եւ ոչ ի փառս առժամայնս. ընդ որոյ վաճառեալ ոմանց<sup>11</sup> զփառս անեղծին Աստուծոյ, ընդ սնտոխի եւ ապականացու կենաց աշխարհիս՝ ուրացողք<sup>12</sup> լինին. վասն զի մաւտ է առ դուրս վաճառ՝ թուլացելոցն ի կորուստ, եւ հասեալ կայ հուպ աւզնութիւն՝ զաւրացելոցն ի փրկութիւն: 64 Յորս եւ դու<sup>13</sup> հայեցեալ տեսեր<sup>14</sup> շուրջ զաստուածային սեղանովն պարելով զտղայսն, չհայելով բնաւ<sup>15</sup> ի սայթաքմունս սնտոխի հեթանոսական պաշտամանն. յորոց ոմանք կատարելութեան հասեալք՝ մարտիրոսական պսակին լինին արժանիք<sup>16</sup>: 65 Եւ այլք յարանց բազմաց<sup>17</sup>, եւ ոչ միայն յարանց<sup>18</sup>, այլ գտանին եւ ի կանանց, որք թեպէտ եւ ոչ սրով, այլ ի շնորհաց սուրբ Յոզակոյն զաւրացեալք<sup>19</sup>՝ բազում բարեգործութեամբք կատարին: 66 Որպէս երեւեին<sup>20</sup> քեզ լուսափայլ նշոյլք արձակեալք ի մանկտուոյն. յորոց ոմանց կարմրագոյն փայլմամբ երփն երփն էր գոյնն<sup>21</sup>՝ զկատա-

1 ՁԱտ. բազմութիւն

2 ՁԱտ. սկտեղն

3 ԲԳտ. արծաթ սկտեղն, զուարթատեսիկ ցնծալից

4 ՏՏ. շառաւիղք

5 Ձ. ընդ որ

6 ԲԳտ. միաբանեալք

7 Ձ. չիք լաւ արանց

8 Ձ. աստուծոյ, գյարուցմունս

9 Ձ. համարել

10 ԲԳտ. համարեալ արհամարհեցեն, միացուցեալ

11 Ձ. չիք ոմանց

12 ՁԱտ. ուրացող

13 ՁԱտ. յորում եւ դու

14 ԲԳտ. հայեցեալ շնորհի ակամբ տեսեր

15 Ձ. չպահելով բնաւ

16 ՁԱտ. արժանաւորք

17 Ատ. եւ յայլ արանց բազմ...

18 Ձ. չիք եւ այլք յարանց բազմաց, եւ ոչ միայն յարանց

19 ՁԱտ. զօրացեալ

20 ՁԱտ. երեւին

21 ԲԳտ. յորոց կարմրագոյն փայլմամբ երփներ գոյնն. ՁԱտ. յոմանց (չիք յորոց)... երփն երփն ներկոյն